Հաստատում եմ

Գավառի պետական երաժշտական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

_____ Մ. Միրականյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 թթ.

Գավառ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը օրենսդրական մակարդակով սահմանված կարևոր խնդիրներից է:Կրթությունը հասարակության տնտեսական,հոգևոր և սոցիալական առաջընթացի հիմնական միջոցն է: Միաժամանակ, կրթությունը հանդիսանում է յուրաքանչյուր մարդու զարգացման,նրա դաստիարակության և բարեկեցության պայմանը:Այդ պատճառով էլ քաղաքակիրթ պետությունները հսկայական միջոցներ են ներդնում կրթության, դաստիարակության ուղղությամբ՝գիտակցելով, որ այդ միջոցները ապագայում կվերադարձվեն հասարակությանը՝ գիտական հայտնագործությունների, մշակութային արժեքների,որակյալ աշխատուժի և այլ ձևով: Կրթությունը կոչված է նպաստելու մարդկային անհատականության կերտմանն ու զարգացմանը,նրան քաղաքացիական և քաղաքական կյանքի լիիրավ մասնակից դարձնելուն,մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանն ու ամրապնդմանը,ազգերի միջև փոխըմբռնմանն ու միջազգային խաղաղությանը: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է,որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:Հայաստանում կրթությունն միշտ բարձր վարկանիշ է ունեցել,և այսօր էլ կրթության համակարգի պահպանումն ու զարգացումը,ինչպես նաև միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը պետական ու ազգային կարևորագույն մարտահրավերներից մեկն է համարվում: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի մասնագիտական որակյալ կրթությունն ու ուսուցումը: Դրա ապահովումն ու մատչելիությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից է: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի ներկայիս բարեփոխումն ուղղված է մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Գավառի պետական երաժշտական ուսումնարանը (այժմ՝ Քոլեջ) հիմնադրվել է 1989 թվականին: Հիմնադրման օրվանից Քոլեջի գործունեությունն ուղղված է եղել միջին մասնագտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը,կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին,կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցկության,ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը:Քոլեջը տվել է շուրջ 635 շրջանավարտ: Նրանցից շատերը շարունակել են իրենց ուսումը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: Քոլեջի բոլոր շրջանավարտները ապահոված են աշխատանքով:Քոլեջն ապահովում է Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում պահանջված որակյալ մասնագետներով: Քոլեջի շենքը հիմնանորոգված է, ունի լոկալ ջեռուցում, համալրված է երաժշտական գործիքներով ,ժամանակակից տեխնիկական միջոցներով, դիդակտիկ նյութերով: Քոլեջի դասախոսական կազմը տիրապետում է մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողությունների, պարբերաբար իրականացվում են վերապատրաստման դասընթացներ: Քոլեջի ուսանողները մասնակցում են տարբեր հանրապետական և միջազգային փառատոնների ու մրցույթների և արժանանում բարձրագույն մրցանակների և պատվոգրերի:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր համաշխարհային տնտեսությունը խարսխված է գիտելիքի վրա,և Հայաստանի համար հույժ կարևոր է լրջորեն ներկայացված լինել աշխարհի առաջատար ստեղծագործողների,արվեստագետների,կատարողների ու արվեստը գնահատողների շարքում,ինչը հնարավորություն կտա Հայաստանին հարուստ մշակույթ ունեցող այլ երկրների հետ հավասար մասնակցել արվեստի զարգացման համաշխարհային առաջընթացին: Մշակույթի և արվեստի կրթական հաստատությունների հիմնական առաքելությունն է կրթական համակարգի նորարարական զարգացման և կայունացման գործընթացի ապահովումը, հիմքում պահպանելով կրթական դաշտի դասական ավանդույթներն ու ֆունդամենտալ բնույթը: Միաժամանակ էթնոմշակութային առանձնահատկությունների վերածնունդի ակտիվ գործընթացը պայմանավորում է մատաղ սերնդի դաստիարակության համար նոր ժամանակների արժեհամակարգի ձևավորումը և մշակութային ավանդույթների փոխանցումը նոր սոցիալ-մշակութային միջավայրում:

Գավառի պետական երաժշտական քոլեջն իր ստեղծման ու ինքնահաստատման 33 տարիների ընթացքում հավատարիմ է մնացել իր առաքելությանը:Մասնավորապես Գավառի պետական երաժշտական քոլեջն իր առաքելությունն է համարում մասնագիտական կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում գիտելիքի ստեղծման ու հմտությունների ձևավորման,փոխանցման ու տարածման,սովորողների ազգային մտածելակերպի ձևավորման միջոցով սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցման, կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ կրթական գործունեության իրագործում՝ ուղղված արվեստի ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը:

Քոլեջում իրականացվող միջին մասնագիտական կրթությունը տալիս է ընտրության հնարավորություն.

- Աշխատել մասնագիտական դաշտում
- Զբաղվել անհատական ձեռներոցությամբ
- Շարունակել կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Գավառի պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ը Գեղարքունիքի մարզում արվեստի(ոլորտի) միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը լինելով,պետք է շարունակի իր նշանակալի դերակատարությունը՝մարզում արդյունավետ մասնագիտական կրթություն իրականացնելու և մշակութային միջավայր ստեղծելու:Քոլեջը ձգտում է դառնալ այնպիսի հաստատություն, որը՝

- Ստեղծելու է ուսումնական հաստատություն,որը կհայտնաբերի շնորհալի և տաղանդավոր անձանց

- Ապահովելու է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը
- Առաջարկելու է ուսանողներին համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր
- Տրամադրելու է ուսանողներին և աշխատողներին բարձրորակ կրթություն և բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար անհրաժեշտ բարենպաստ միջավայր
- Իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ քոլեջի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՔՈԼԵՋԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ուրվագծել միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ,ճշտել այն խնդիրների ցանկը,որոնք պետք է պատրաստ լինի լուծել քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքների կիռարման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար:Միևնույն ժամանակ,պահպանելով և ամրապնդելով իր կայուն տեղը ՀՀ միջին մասնագիտական կրթության համակարգում,ինտեգրել և փորձել դառնալ միջազգային կրթական համակարգի ակտիվ ամդամներից մեկը:

Քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է հետևյալ մասնագիտությունների գծով.

Մասնագի-տության դասիչը	Մասնագիտության Անվանումը	Որակավորման դասիչը	Որակավորման անվանումը	Կրթության ձևը, ուսուցման տևողությունը, ուսուցման հիմքը
0215.06.5	Գործիքային կատարողական արվեստ՝ /ըստ գործիքներիտեսակների		Երաժիշտ-Կատարող, Դասավանդող /ըստ գործիքների տեսակների/	Առկա, 4 տարի՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա
	Դաշնամուր	0215.06.01.5		
	Լարային գործիքներ	0215.06.02.5		
	Ժողովրդական գործիքներ	0215.06.04.5		
0215.01.5	Երգեցողություն	0215.02.01.5	Երգիչ-կատարող	
0215.02.5	Երգչախմբավարություն	0215.02.01.5	Խմբավար-դասավանդող	
0213.02.5	Գեղանկարչություն	0213.02.01.5	Նկարիչ-դասավանդող	Առկա, 5տարի՝ հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա

Քոլեջում ներկա պահին սովորում են 101 ուսանող:Աշխատողների թիվը կազմում է 48.որից՝ 32 դասախոս,16՝ ղեկավար,ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ: Դասախոսներն ունեն մասնագիտական զարգացմանն անհրաժեշտ պատրաստվածություն և կարողություններ,ակտիվորեն մասնակկցում են տարբեր վերապատրսատման դասընթացների,սեմինարների և ծրագրերի:

Քոլեջում գործում է կարիերայի ուղղորդման կենտրոն,որը տրամադրում է տեղեկատվություն,խորհրդատվություն,ուղղորդման աշխատանքներ,նպաստում է աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը,ապահովում ուսանողների,շրջանավարտների և գործատուների կապը,կազմակերպում բազմաբնույթ միջոցառումներ և սեմինարներ:

ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ 5 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսանողների թիվը				
2018	2019	2020	2021	2022
23	28	24	30	23

ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շրջանավարտների թիվը				
2018	2019	2020	2021	2022
27	18	19	24	24

ՔՈԼԵՋԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Անձնակազմ	Ընդամենը	Այդ թվում			
		Դասավանդում է	Բաշխումն ըստ տարիքի		
			մինչև 30	30-60	60-ից բարձր
Վարչական	4	3		4	
այդ թվում՝ կանայք	4				
Դասախոսական	30		3	20	7
այդ թվում՝ կանայք	20		2		
Ուսումնաօժանդակ	5	2	1	4	
այդ թվում՝ կանայք	4		1	3	
Սպասարկող	9			3	6
այդ թվում՝ կանայք	2			2	

Ընդամենը	48	5	3	29	13
այդ թվում՝ կանայք	30	3	2		

ՔՈԼԵՋԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Քոլեջն ունի կանոնադրություն, ղեկավարվում է իր կողմից մշակված ներքին կանոնակարքերով:
- Քոլեջում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ՝ կառավարման,տնօրինական, մանկավարժական, ուսանողական, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները
- Քոլեջի տնօրինությունն ունի քոլեջի ղեկավարման և կառավարման համար անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է քոլեջի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին
- Քոլեջի գործունեությունը բաց է և թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի են բոլորին
- Քոլեջը ուսումնադաստիարակչական հարցերում ապահովում է ուսանողակենտրոն մոտեցում՝ներդաշնակորեն համադրելով ուսուցման ավանդական և արդիական մեթոդների կիրառումը
- Ուսումնաօժանդակ կազմը պարտաճանաչ և պատասխանատու ձևով կատարում է պարտականությունները
- Դասախոսական կազմը տիրապետում է մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողությունների,պարբերաբար իրականացվում է վերապատրաստման դասընթացներ
- Քոլեջը ապահովում է Գեղարքունիքի մարզի երաժշտական և արվեստի ոլորտներում պահանջված որակյալ մասնագետներով:

Քոլեջի շենքային և նյութատեխնիկական բազան

- ✓ Քոլեջի շենքը հիմնանորոգված է
- ✓ Քոլեջն ունի լոկալ ջեռուցում
- ✓ Լսարանները կահավորված են նոր գույքով
- ✓ Քոլեջն ունի համակարգչային լսարան,ինտերնետ կապ
- ✓ Քոլեջն համալրվել է ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներով,երաժշտական գործիքներով,դիդակտիկ նյութերով,սպորտային մարզասարքերով:

Բյուջե, ֆինանսներ

- ✓ Կայուն պետական ֆինանսավորում
- ✓ Ֆինանսների ճիշտ և կայուն բաշխում

Քոլեջի հնարավորություններ

- Քոլեջի շրջանավարտների շարունակական կրթությունը հարակից մասնագիտական ԲՈՒՀ-երի 2-րդ և 3-րդ կուրսերում
- Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ երաժշտական արվեստի դպրոցների ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման համար
- Կազմակերպել լրացուցիչ կրթական ծրագրեր և կարճաժամկետ դասընթացներ

ՔՈԼԵՋԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Քոլեջի դասախոսական կազմի և հաստիքային աշխատողների ցածր աշխատավարձը,
- Քոլեջի աշխատակիցներին պետության կողմից տրամադրվող սոցիալական փաթեթի հատկացման բացակայությունը:Փաթեթի առկայությունը հնարավորություն կտար քոլեջի աշխատակիցներին օգտվել առողջապահական,հանգստի և փաթեթով նախատեսված այլ ծառայություններից,
- Պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկ,
- Դիմորդների մուտքային գիտելիքների ոչ բավարար մակարդակ,
- Բացակայում է երաժշտական և արվեստի ԲՈՒՀ-երի դասախոսների փոխադարձ համագործակցությունը Քոլեջի դասախոսական կազմի հետ,
- Արտաբյուջետային միջոցների բացակայություն:

Քոլեջի համար արտաքին վտանգները

- Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը
- Արտագաղթը
- Դիմորդների և սովորողների թվի նվազումը:

ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գավառի պետական երաժշտական քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակն է 2023-2028թթ. ժամանակահատվածի համար ձևավորել այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը կստեղծի ժամանակակից կրթական գործունեությամբ քոլեջի կայուն զարգացման և կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ, քոլեջում կրթական գործընթացի կազմակերպման համար առանցքային դարձնելով կրթության որակի ապահովման միջազգայնորեն ընդունված համընդհանուր չափորոշիչները և չափանիշերը: Վերոգրյալ առաքելությանը հավատարիմ՝ Գավառի պետական

երաժշտական քոլեջը առաջիկա 5 տարիների իր նպատակն ու գործունեության առաջնային հիմնախնդիրներն է համարում.

- Պահպանել և զարգացնել արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում և աշխարհում ձևավորված ավանդույթները,բոլոր շահառուներին որակյալ մասնագիտական կրթության և ուսուցման տրամադրման ու կազմակերպման,ինչպես նաև գեղագիտական դաստիարակության միջոցով

- Վերածվել տարածաշրջանային մշակույթի առաջատար կենտրոնի՝ իր մեջ ցանցային կերպով ընդգրկելով Գեղարքունիքի մարզի քաղաքների և համայնքների արվեստի,երաժշտական և գեղարվեստի դպրոցները

- Ապահովել որակյալ մասնագետների թողարկումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովման,սոցիալական գործընկերների հետ համագործակցության ձևավորման,նոր տնտեսական հարաբերությունների ու ժամանակակից պահանջները բավարարող ճկուն կրթական ծրագրերի տրամադրման հիման վրա

- Ամրապնդել ուսումնական հաստատության և աշխատաշուկայի միջև փոխհարաբերությունները

- Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

- Իրականացնել ուսումնական ստեղծագործական և մեթոդական աշխատանքներ,կազմակերպել վերապատրաստման և վարպետության դասընթացներ,զարգացնել ուսանողների հմտությունները,բարձրացնել նրանց կատարողական մակարդակը մասնագիտական կողմնորոշման համապատասխան:

- Ձևավորել նպաստավոր,տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ քոլեջի ուսանողների ստեղծագործական միտքը զարգացնելու և արդյունավետ գործունեությունը խթանելու համար

- Իրականացնել բարձորակ դասախոսական կազմի նպատակաուղղված ներգրավում՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր

- Քայլեր ձեռնարկել քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում Քոլեջի ընթացիկ գործունեության վերլուծության արդյունքներից հետևում է, որ նշված նպատակն ապահովելու համար անհրաժեշտություն է դառնում ձեռնարկել համընդհանուր համալիր միջոցառումներ հետևյալ ուղղություններով.

I. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈԼՈՐՏՈՒՄ

- Քոլեջի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի և համապատասխան օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում
- Կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական գործընթացի կազմակերպման ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի ապահովման նպատակով
- Սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործում, ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման նոր ձևերի և եղանակների կիրառում
- Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի (մոդուլների) շարունակական թարմացում, ակնկալվող մասնագիտական իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների հստակ սահմանում, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին:
- Մասնագիտական կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում ու արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում ու բազմազանեցում
- Քոլեջի ուսանողների և շրջանավարտների շրջանում կրթության որակից բավարարվածության բացահայտման հարցումների պարբերաբար անցկացում, ուսուցման և ուսումնառության որակի համալիր ուսումնասիրություն, ներքին ստուգումների անցկացում, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի, դասընթացների կազմակերպման մեկնարկային հնարավորությունների, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների, ուսանողների գիտելիքների որակի բարելավման կառուցակարգերի մշակում և ներդրում
- Ամփոփիչ (ավարտական) ատեստավորման գործընթացի կատարելագործում, ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքում սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների օբյեկտիվ գնահատում
- Ուսումնական աշխատանքի արդյունավետության բարձրացում, ուսանողների կրթական կարիքների բացահայտում, նրանց խնդիրների վեր հանում և պատշաճ լուծում, սովորողների ինքնուրույնության բարձրացում իրենց կրթական անհատական ծրագիրը կազմելու և ուսմանը վերաբերող այլ հարցերում
- Գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցերի, տեղեկատվական պաշարների հարստացում

II. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

- Քոլեջի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում
- Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում
- Մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում, աշխատակազմի նպատակային հավաքագրում, ընտրության կազմակերպում, մասնագիտական աջակցման ծրագրերի իրականացում, ուղղորդում, կատարողական արդյունքների ստուգման և գնահատման կառուցակարգերի կիրառում, նրանց ծառայողական առաջխաղացման պլանավորում, փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում
- Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում
- Քոլեջի դասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական, կազմակերպական որակների շարունակական զարգացում՝ վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծրագրերի միջոցով
- Քոլեջում դասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ կադրերով, փորձառու մասնագետների և սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցության ապահովում:

III. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, կրթամակարդակի գնահատում՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն
- Սովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում
- Ուսանողական ինքնակառավարման մարմնի՝ ուսանողական խորհրդի, քոլեջի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում
- Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ սովորողների հայրենասիրական,քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-

մշակութային, աշխատանքային,բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության նպատակով

IV. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

- Քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով
- Քոլեջի նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների համալրում, գույքի նպատակային և խելամիտ տնօրինում, խնայողաբար օգտագործում
- Քոլեջի դահլիճի կոսմետիկ վերանորոգում
- Ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում

ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ , ԹԻՐԱԽՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ճշտել այն ռազմավարական հիմնախնդիրների ցանկը ,որոնք պետք է պատրաստ լինի լուծել Քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար,նախապատվություն տալով այնպիսի ռազմավարությունների,որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք:

Ըստ այդմ, սահմանվել է 8 հիմնարար հիմնախնդիր, արփանագրվել են թիրախները,սահմանվել ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները,նկարագրվել հիմնախնդիրների լուծման ռեսուրսները.

<u>Հիմնանդիր 1</u> Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է,

- Ապահովել հիմնական ուսումնական առարկաների համապատասխան կրթական պլանների և ծրագրերի մշակումը՝ ըստ պետական չափորոշիչների:
- Իրականացնել Քոլեջի շրջանավչտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության աստիճանի վերաբերյալ համալիր հետազոտություն և վերլուծություն՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացմն երաշխավորությունների մշակման և կատարելագործման նպատակով:

<u>Հիմնախնդիր 2</u> Կատարելագործել և հզորացնել ներքին որակի ապահովման համակարգը՝ձգտելով դեպի առաջավոր չափանիշներ:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար,այն է. Կատարելագործել հինը և ստեղծել նոր ներքին չափանիշներ,կանոնակարգեր ու ընթացակարգեր՝
    1. Ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի մշակման,հաստատման մոնիթորինգի և պարբերական վերանայման համար,
    2. Ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ վերանայման և բողոքարկման մեխանիզմների ներառմամբ,դրանց հրապարակայնության ու հետևողական կիրառման ապահովմամբ:
- Ստողծել և հրապարակել մեխանիզմներ և չափանիշներ մանկավարժա-դասախոսական անձնակազմիմասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների պարբերական գնահատման համար:
- Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշներին և ինքնագնահատման գործընթացին վերաբերող վերլուծական հաշվետվության հրապարակայնությունն ու թափանցիկությունը Քոլեջի ներքին և արտաքին շահառուների համար,ինչպես նաև սովորողների մասնակցությունը և հետադարձ կապը ուրակի գնահատման գործընթացներում:
- Պարբերաբար նախաձեռնել և իրականացնել Քոլեջի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց՝ համապատասխան հաշվետվություն,որը կնպաստի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

<u>Հիմնախնդիր 3</u> Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝որակի հավաստման չափանիշներին համապատասխան:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է,

- Շարունակել բարձորակ մանկավարժ դասախոսների ներգրավումը՝նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
- Շարունակել և զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները՝ կրթական նոր տեխնալոգիաներին տիրապետելու և դրանք Քոլեջի ուսումնական գործընթացում ներդնելու,էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և կրթական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:
- Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ ու խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող զարգացման ծրագրերին:
- Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը:
- Մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով ներդնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխնիզմ՝ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության:

<u>Հիմնախնդիր 4</u> Տրամադրել բարձորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ,որոնք միտված են ուսանողների կրթական,մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Մշակել ուսուցման տարբեր մոտեցումներից և մեթոդներից բավարարվածության գնահատման չափանիշներ և գնահատել ուսանողների բավարարվածությունը Քոլեջում ստացած իրենց կրթությունից:
- Զարգացնել սովորողների ամենամյա տարեվերջյան հարցումների գործընթացը:
- Կատարելագործել և առավել արդյունավետ դարձնել պրակտիկաները:
- Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական,կարիերայի նախապատրաստման,աշխատանքների որոնման օժանդակության ծառայությունները:

<u>Հիմնախնդիր 5</u> Ժամանակակից չափաանիշներին համապատասխան զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան՝ ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Խորացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում:
- Շարունակաբար բարելավել արտաքին տեղեկատվական ռոսուրսների մատչելիությունը Քոլեջի ուսանողների և մանկավարժական կազմի համար:

Հիմնախնդիր 6 Օգտատործելով օրենսդրությամբ և կանոնադրությամբ ընձեռնված հնարավորություններըէ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն լրացուցիչ արտաբյուջետային միջոցներ ներգրավելու նպատակով:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Իրականացնել կարճաժամկետ դասընթացներ՝հաստատված մասնագիտություններին ավելացնելով նորերը:
- Իրականացնել մշակութային միձոցառումներ:
- Զնավորել և զարգացնել նախաձեռնողականություն,ձեռներեցություն,բիզնես մտածողություն
- Բացահայտել ձեռնարկատիրական ներուժը,զարգացնել դրա հմտություններն ու կարողությունները:
- Գոյացած միջոցները կանոնադրական նպատակներով օգտագործելու նկատառումով,դրանք ուղղել նյութատեխնիկական բազայի թարմացմանը,քոլեջի աշխատակիցների աշխատավարձների վերանայմանը,ներքոլեջային կրթաթոշակների սահմանմանը և այլն:

Հիմնախնդիր 7 Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Պահպանել հստակեցված լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև:
- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը,ընդլայնել և խորացնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:
- Ապահովել կառոցողական համագործակցության զարգացումը Քոլեջի կառավարման,ուսանողական և այլ խորհուրդների միջև:

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Նպատակը	Գործողություններ	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Պատասխանատուներ
I. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈԼՈՐՏՈՒՄ				
1.Քոլեջի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի և համապատասխան օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում	1.1 Քոլեջի կանոնակարգային բազայի մշտական արդիականացում, համապատասխանեցում ոլորտի պետական գերատեսչական ակտերին 1.2 Գործող կանոնակարգերի, ընթացակարգերի բարելավում 1.3 Կանոնակարգման ենթակա ոլորտների համար ընթացակարգերի մշակում և գործարկում	Նոր մշակված կամ բարելավված կանոնակարգեր	2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն
2.Սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործում, ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման նոր ձևերի և եղանակների կիրառում	ՈՒսանողների կողմից ձեռք բերված ուսումնական վերջնարդյունքների գնահատման նոր մեթոդաբանության մշակում՝ գիտելիք.կարողություն, հմտություն իրազեկությունների գնահատման տեսանկյունից	Մշակված և հաստատված նոր մեթոդաբանություն,համապատասխան կանոնակարգ	2023-2028	Քոլեջի ուս.գծով փոխտնօրեն
3.Կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական գործընթացի կազմակերպման	3.1 Ներքին և արտաքին շահառուների շրջանում հետադարձ կապի ուսումնասիրման նոր կառուցակարգերի մշակում և ներդնում	Քոլեջի ծրագրային հավատարմագրում	2023-2028	Քոլեջի ուս. գծով փոխտնօրեն

ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի ապահովման նպատակով	3.2 Հետադարձ կապի ուսումնասիրման գործում ակտիվորեն ներգրավվում ուսանողական ինքնակառավարման մարմիններին 3.3 Քոլեջի ամենամյա ինքնավերլուծության իրականացում			
3.Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, ակնկալվող մասնագիտական իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների հստակ սահմանում, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին	Առարկայական ծրագրերում (մոդուլներում)վերջնարդյունքների հստակեցում	Վերջնաարդյունքներ ով սահմանված և իրականացվող կրթական ծրագրեր	2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն, բաժնի վարիչներ
4.Մասնագիտական կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում ու արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում ու բազմազանեցում	Արդիականացնել առարկայական ծրագրերը(մոդուլներ),՝սահմանելով յուրաքանչյուր դասընթացի կրթական վերջնարդյունքները, դրանց հետ փոխկապակցված ուսուցման,ուսումնառության և ստուգման ու գնահատման մեթոդները	Վերանայված առարկայական ծրագրեր(մոդուլներ), ուսումնական պլաններ	2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն, բաժնի վարիչներ
5. Քոլեջի ուսանողների և շրջանավարտների շրջանում կրթության որակից բավարարվածության բացահայտման հարցումների պարբերաբար անցկացում, ուսուցման և	5.1 Կրթության որակի ապահովման և վերահսկման ժամանակակից ազգային և միջազգային փորձի ուսումնասիրում,գործընթացներում ուսանողների ակտիվ ներգրավվում	Դասախոսական կազմի գնահատման համակարգ	2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն

ուսումնառության որակի համալիր ուսումնասիրություն, ներքին ստուգումների անցկացում, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի, դասընթացների կազմակերպման մեկնարկային հնարավորությունների, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների, ուսանողների գիտելիքների որակի բարելավման կառուցակարգերի մշակում և ներդրում	5.2 Դասախոսական կազմի գործունեության գնահատման բազմագործոն համակարգի մշակում և գործարկում			
6. Ամփոփիչ (ավարտական) ատեստավորման գործընթացի կատարելագործում, ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքում սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների օբյեկտիվ գնահատում	Այնպիսի կառուցակարգերի մշակում և գործարկում,որոնք կստուգեն ոչ միայն սովորողի գիտելիքը,այլ նաև կարողություններն ու հմտությունները	Սովորողների կարողությունների և հմտությունների ստուգման մեթոդաբանություն	2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն, բաժնի վարիչներ
7. Ուսումնական աշխատանքի արդյունավետության բարձրացում, ուսանողների կրթական կարիքների բացահայտում, նրանց խնդիրների վեր հանում և պատշաճ լուծում, սովորողների ինքնուրույնության բարձրացում իրենց կրթական	Ուսանողների շրջանում մշտական հարցումների իրականացում,կրթական կարիքների վերհանում		2023-2028	Տնօրեն,քոլեջի ուս.գծով փոխտնօրեն, բաժնի վարիչներ

անհատական ծրագիրը կազմելու և ուսմանը վերաբերող այլ հարցերում				
8. Գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցերի, տեղեկատվական պաշարների հարստացում	8.1 Դասախոսների,ուսանողների շրջանում հարցումների անցկացում,ուսումնամեթոդական կարիքների վերհանում 8.2 Գրադարանային ֆոնդի համալրում՝ ըստ առարկայական ծրագրերում ներկայացվող գրականության ցանկի	Ուսումնամեթոդական ռեսուրսներով ապահոված ՄԿԾ-ներ	2023-2028	Տնօրեն,,գրադարանավար
II. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ				
1. Քոլեջի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում	1.1 Վերանայել վարչարարության հիմնական սկզբունքները,մշակել և ներդնել նոր գործիքներ և կիրառել մեթոդներ,որոնք ավելի թափանցիկ և օպերատիվ կդանձնեն քոլեջի կառավարումը		2023-2028	Տնօրեն, Կադրերի բաժին
2.Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունության պահպանում	Մշակել և իրականացնել վարչական անձնակազմի,մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունները զարգացնող ծրագրեր	Վարչական անձնակազմի պաշտոնի նկարագրեր	2023-2028	Տնօրեն
3. Մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում,	3.1 Մարդկային ռեսուրսների կառավարման ընթացակարգի մշակում	Դասախոսական կազմի ընտրության	2023-2028	Տնօրեն, Կադրերի բաժին

աշխատակազմի նպատակային հավաքագրում, ընտրության կազմակերպում, մասնագիտական աջակցման ծրագրերի իրականացում, ուղղորդում, կատարողական արդյունքների ստուգման և գնահատման կառուցակարգերի կիրառում, նրանց ծառայողական առաջխաղացման պլանավորում, փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում	3.2 Մասնագիտական վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում	մշակված կանոնակարգ		
4.Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում	4.1 Վերանայել կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,դրանք համապատասխանեցնելով ռազմավարականության նպատակների իրականացմանը 4.2 Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի պաշտոնների անձնագրերի և աշխատանքային նկարագրերի մշակում		2023-2028	Տնօրեն, Կադրերի բաժին
5. Քոլեջի դասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական, կազմակերպական որակների շարունակական զարգացում՝	5.1 Մշակել և գործարկել դասախոսների որակավորման բարձրացման ծրագրեր		2023-2028	Տնօրեն

վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծրագրերի միջոցով	5.2 Մշակել և իրականացնել դասախոսների մանկավարժական հմտությունները զարգացնող ծրագրեր 5.3 Մշակել և իրականացնել վարչական անձնակազմի կազմակերպչական հմտությունները զարգացնող ծրագրեր			
6.Քոլեջում դասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ կադրերով, փորձառու մասնագետների և սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցության ապահովում	Մշակել և ներդնել դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի		2023-2028	Տնօրեն
III. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ				
1. Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, կրթամակարդակի գնահատում՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն	Քոլեջի կառավարման գործում որոշումների կայացման մեջ ուսանողական ինքնակառավարման մարմնի դերի բարձրացում		2023-2028	Տնօրեն, ուս.գծով փոխտնօրեն, ՈՒԽ
2. Սովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության	2.1 ՈՒսանողական ինքնակառավարման մարմնի աշխատանքների ուղղորդում դեպի	Հանրային նշանակության նախագծեր և	2023-2028	ՈՒԽ

միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում	հանրային նշանակության նախագծերի իրականացում 2.2Ստեղծագործական,գեղարվեստական միջոցառումների կազմակերպման աշխատանքների ակտիվացում	դրնացում մասնկցեղ ուսանողների քանակ		
3. Ուսանողական ինքնակառավարման մարմնի՝ ուսանողական խորհրդի, քոլեջի կառավարման գործընթացում նրանց ակտիվ դերակատարության ապահովում	3.1 Ուսանողների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղված միջոցառումների իրականացում 3.2 ուսանողների՝ կրթության որակից բավարարվածության աստիճանի մշտադիտարկում	Ուսանողների՝կրթության ոլորտից բավարարվածության աստիճանի աճ	2023-2028	Տնօրեն
4. Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ սովորողների հայրենասիրական,քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային,աշխատանքային,բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության նպատակով	Քոլեջի համապատասխան կանոնակարգերում ուսանողների հասարակական ակտիվության վերաբերյալ խրախուսման կառուցակարգերի ամրագրում		2023-2028	Տնօրեն
III. ՔՈԼԵՋԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ				

1. Քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով	Արտաբյուջետային ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնում,ֆինանսավորվող կրթական ծրագրերի մշակում և իրականացում		2023-2028	Տնօրեն, հաշվապահ
2. Քոլեջի նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների համալրում, գույքի նպատակային և խելամիտ տնօրինում, խնայողաբար օգտագործում	Մշտապես ուսումնասիրել շահառուների բավարարվածության աստիճանը ուսումնական, տեխնիկական ռեսուրսների հասանելիությունից		2023-2028	Տնօրեն,տնտեսվար,գրադարանավար
3. Քոլեջի դահլիճի վերանորոգում	Իրականացնել դահլիճի վերանորոգման աշխատանքները		2023-2028	Տնօրեն,տնտեսվար
4. Ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում	4.1 Մշակել ֆինանսակն միջոցների պլանավորման,ռիսկերի կանխատեսման կառուցակարգեր 4.2 Շարունակել իրականացնել գնումների գործընթացիթափանցիկ հաշվետվողականություն		2023-2028	Տնօրեն, հաշվապահ

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ քոլեջի ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակարգմանը: Քոլեջի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական ծրագրի՝ կախված պետական պատվերի համակարգում սովորողների թվից նաև արտաբյուջետային միջոցներ , որոնք ձևավորվում են վճարովի համակարգում սովորողների վարձավճարներից:

Քոլեջը,որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն,շահույթի նպատակ չի հետապնդում:Երկարաժամկետ պլանավորմամբ նախատեսվում է լրացուցիչ ծառայությունների մատուցում,որը կնպաստի շահույթի ձևավորմանը:Ակնկալվող շահույթը կօգտագործվի բացառապես կանոնադրական նպատակների իրականացման համար: Առաջացած շահույթը հնարավորություն կտա ձեռք բերել ուսումնական և մասնագիտական գրականություն,կօգտագործվի քոլեջի նյութատեխնիկական բազան հարստացնելու,եղածը արդյունավետ շահագործելու համար:

Քոլեջն իր կանոնադրության համաձայն կարող է իրականացնել հետևյալ գործառույթները.

ա/ Միջին մասնագիտական,նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթություն,հանրակրթության,լրացուցիչ կրթության կազմակերպում,

բ/ Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,

գ/Նախապատրաստական դասընթացների կազմակերպում,

դ/Մասնագիտական ուսուցման դասընթացի կազմակերպում,

ե/ Կադրերի վերապատրաստում,վերառրակավորում և որակավորման բարձրացում,

զ/ Գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

է/ Ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնաարտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում,

ը/ Հրատարակչական գործունեության իրականացում,

թ/Սովորողների հանրային սննդի կազմակերպում,

ժ/Սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում,

ժա/ Մշակութային գործունեության իրականացում:

Քոլեջում իրականացվելիք ներդրումների արդյունքում ընդլայնվելու են քոլեջի հնարավորությունները,ներգրաավվելու են նոր շահառուներ,մատուցվելու են նոր ծառայություններ:

Առաջիկա 5 տարվա կտրվածքով որպես ծրագրի գործողություններ նախատեսվում է՝

1. Ընդլայնել մասնագիտությունների ցանկը: Նախատեսվում է ներդնել «Պարարվեստ» մասնագիտությունը
2. Կազմակերպել կարճաժամկետ դասընթացներ:
3. Արտադպրոցական դաստիարակության վճարովի խմբերի ստեղծում:

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ,ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը

1. Տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներով և սահմանային իրավիճակով պայմանավորված տնտեսական,անվտանգային անկայունություն կամ ճգնաժամ
2. Դիմորդների սպասվելիք թվաքանակի նվազում՝պայմանավորված բուհական կրթություն ստանալու նախապատվությամբ
3. Բյուջետային ֆինանսավորման աղբյուրներից նախատեսվող միջոցների ստացման հետ կապված խնդիրներ՝պայմանավորված տնտեսական իրավիճակով:
4. Կրթության որակի անկում կամ նվազում
5. Արտագաղթ
6. Աշխատավարձի ցածր լինելու հանգամանքով կամ արտագաղթով պայմանավորված կադրերի արտահոսք
   Նշված ռիսկերը կարող են հանգեցնել
   ա/պահպանման ծախսերի կրճատման
   բ/աշխատավարձերի նվազեցման
   դ/աշխատակիցների թվաքանակի կրճատման

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

- ✓ Վերանորոգված շենքի պահպանում և արդյունավետ շահագործում
- ✓ Նյութատեխնիկական միջոցների շարունակական ձեռքբերում,պահպանում և արդյունավետ շահագործում
- ✓ Վարձավճարների աճի հնարավորինս բացառում
- ✓ Բարձրսկսրգ մանկավարժադասախոսական անձնակազմ
- ✓ Մանկավարժադասախոասական անձնկակազմի որակի ընդլայնում
- ✓ Սոցգործընկերության խորացում
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի հնարավորությունների օգտագործում
- ✓ Միջանձնային առողջ հարաբերություններ
- ✓ Հաստատության բարի համբավ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ՝ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ,ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Սույն ծրագրի մշտադիտարմանը,վերահսկողությանը,իրականացման արդյունավետ գնահատմանն ուղղված լինելու գործիքներ են հանդիսանալու քոլեջի կանոնադրությունը և գործող մի շարք կանոնակարգեր: Բոլոր հիմնախնդիրները սահմանվել են Քոլեջի ընդհանուր զարգացման, առաքելության նպատակների համատեքստում: Ռազմավարական ծրագիրը ենթակա է մշտադիտարկման ու ընտրված ուղղությամբ առաջընթացի պարբերական գնահատման՝ նոր իրողություններին համապատասխան: Ռազմավարական ծրագրի կատարման արդյունավետությունը կախված է ինչպես արտաքին ազդեցություններից, այնպես էլ Քոլեջի արդյունավետ կառավարման համակարգից, ինստիտուցիոնալ կառուցվածքից, մշակույթից, թիմային աշխատանքից, անձնակազմի Քոլեջին նվիրվածությունից: Ռազմավարական ծրագիրը աշխատանքային ճկուն ծրագիր է և կարող է փոխոխվել՝ ի պատասխան ներքին և արտաքին միջավայրների փոփոխությունների: Կարող են ձևավորվել նոր խոչընդոտներ, որոնք կպահանջեն դրանք հաղթահարելու համար նոր ուղիների և հնարավորությունների ստեղծում: